

Արձանագրություն N1

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

22.09.2016թ. նիստի

Օրակարգ

1. Անվանական կրթաթոշակների ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Ֆակուլտետի խորհրդի 2016- 2017 ուս տարվա աշխատանքային պլանի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 60 անդամներից 41-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ղեկան Ս. Աբրահամյանը ներկայացրեց միջմշակութային հաղորդակցության անգլերենի, ֆրանսիական և թարգմանչական բաժինների անվանական կրթաթոշակների ներկայացվող ուսանողների թեկնածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց անվանական կրթաթոշակի ներկայացնել հետևյալ ուսանողներին.

1. Ամիրխանյան Սուսաննա Սամսոնի /միջմշակութ., 4-րդ կուրս/ - Վ. Մարոյանի անվան կրթաթոշակ:
2. Արիստակեսյան Արևիկ Կարենի /ֆրանս., մագ. 1-ին կուրս/ - Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ,
3. Հարությունյան Նարե Տրիստանի /անգլ. թարգմ., 3-րդ կուրս/ - Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ:

2. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի ղեկանը ներկայացրեց Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2016- 2017 ուս. տարվա աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում հաստատել Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2016- 2017 ուս տարվա աշխատանքային պլանը:

3. ԸՆԹԱՅԻՆ Կ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Հաստատել Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրերի առաջարկի հայտերը:
- Հրատարակության երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ Ա. Առաքելյանի «Ֆրանց Կաֆկայի կյանքի և ստեղծագործության պրոբլեմները ըստ *Օրագրերի*» մենագրությունը:
- Հրատարակության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Սամվել Աբրահամյանի «Անգլալեզու քաղաքական դիսկուրսը միջմշակութային համատեքստում» մենագրությունը:
- Հաստատել Անգլերենի թիվ 1 ամբիոնի հայցորդ Սերինե Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Դատական տեքստի վերլուծությունը որպես լեզվաբանական փորձաքննության բաղադրիչ» Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ., պրոֆ. Ս. Ապրեսյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

22 սեպտեմբերի 2016 թ.